**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 937 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ-201-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայաստանի Հանրապետության «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 22-ի N 07/80-2/14967-14 և N 06/3-3/14996-14, Հայաստանի Հանարպետության քաղաքաշինության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 01/12.1/4821-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Կենսաանվտանգության և կենսաապահովության կարողությունների հզորացում» ծրագրի մասին» N Մ-201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՇԿԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02807433) 2014 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N ՍԱԳԿ-ԲԸԱՇՁԲ-14/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի 3-րդ հարկի վերազինման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 101,693,719 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանարպետության քաղաքաշինության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 938 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 07/80-2/14685-14 և սեպտեմբերի 17-ի N 06/3-3/14522-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 02/6917-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 11,760,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մարզադաշտերի արհեստական խոտածածկը և նյութերը (17 տեղ, 5,530 կգ ընդհանուր քաշով, 16,948 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,200 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆուտբոլի խաղադաշտերի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 2,437,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանի ու Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«10» սեպտեմբերի 2014թ.

«Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետությունում Ֆուտբոլ մարզաձևի զարգացման և մասսայականացման ինչպես նաև երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանման նպատակով ֆուտբոլի խաղադաշտերի վերակառուցում և արհեստական խոտածածկի տեղադրում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքի Հովսեփ Էմինի 123 և Գյումրի քաղաքի Գորկու 77 հասցեներում ու Սևան քաղաքի 4-րդ միկրոթաղամասում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 11,760,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ-ռուսական սլավոնական պետական համալսարանը, Գյումրիի և Սևանի քաղաքապետարանները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2014 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2014 թվականի նոյեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Արհեստական խոտածածկի ներմուծում՝ 16,948 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, 2014 թվականի օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 30-ը:<br>2. Խաղադաշտերի վերակառուցման և արհեստական խոտածածկերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,437,000 դրամ՝ սկիզբը 2014 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2014 թվականի նոյեմբերի 30-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Խաղադաշտերի մետաղյա և փայտյա արգելապատերի նորոգում ու ներկում, մարզագույքի և արհեստական խոտածածկի տեղադրում՝ 2,437,000 դրամ,<br>- Արհեստական խոտածածկի, արհեստական խոտածածկի ժապավենի և սոսնձի ներմուծում՝ 16,948 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի, Գյումրիի և Սևանի քաղաքապետարանների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 939 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 07/80-2/15478-14 և սեպտեմբերի 22-ի N 06/5-1/15025-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 22-ի N ԱՄ/22.2/9743-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Direct Relief International» հասարակական կազմակերպության կողմից ուղարկված դեղորայքի (14 տեղ, 293 կգ ընդհանուր քաշով, 160,956,13 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,011,500 դրամ, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 940 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-676-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/15729-14 և սեպտեմբերի 25-ի N 06/5-1/15464-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված հոսանքի անխափան սնուցման սարքը (1 տեղ, 153 կգ ընդհանուր քաշով, 7,345 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի մասին» N Մ-676-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-845-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 941 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-676-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N 1)

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/15737-14 և սեպտեմբերի 24-ի N 06/5-1/15356-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված թերմոտպիչը (9 տեղ, 88 կգ ընդհանուր քաշով, 20,520 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարտյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի մասին» N Մ-676-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-845-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                         Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 942 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 17-ի N 07/80-2/14588-14 և սեպտեմբերի 16-ի N 06/5-1/14434-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից ձեռք բերված կահույքը և կահավորանքի պարագաները (291 տեղ, 10,160 կգ ընդհանուր քաշով, 58,061 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 6,700 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-380-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 943 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-866-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 26-ի N 07/80-2/15606-14 և սեպտեմբերի 23-ի N 6/5-1/15144-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից ձեռք բերված պրոեկտորը և լամպը (1 տեղ, 45 կգ ընդհանուր քաշով, 4,675 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 911 ԱՄՆ-ի դոլար, «Ձվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվող «ՆՈՒՌ - Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագրի մասին» N Մ-866-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 944 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/80-2/15257-14 և սեպտեմբերի 27-ի N 06/3-3/15632-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուկազո» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862326) 2014 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե եզրաքարերի մատակարարում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 945 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14846-14 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/15007-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնա-դրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեհրաբյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239171) 2014 թվականի սեպտեմ-բերի 8-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարա-րական նյութերի մատակարարում՝ 5,363,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 946 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N 07/80-2/14349-14 և սեպտեմբերի 12-ի N 06/3-3/14358-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 16-ի N 02/6846-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 17-ի N 01/07-1/11002-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի 17-ի N 01/13.3/3516-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 62,584,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2014 թվականի օգոստոսի 27-ին կնքված N ՀՀ/S-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 62,211,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2014 թվականի օգոստոսի 27-ին կնքված N ՀՀ-05/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողություն՝ 373,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

V

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«09» սեպտեմբերի 2014.թ.

## «ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում»

### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտա-ուսուցչական կազմի գործունեության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ Խաչարձան գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 62.584.500,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ օգոստոսի 27 -ից մինչեւ 2015թ. մարտի 27-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ օգոստոսի 27 -ից մինչեւ 2015թ. մարտի 27-ը կատարել վերանորոգման աշխատանքները 62.584.500,00 դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «N1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 62.211.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 373.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 947 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՈՒԺԿԵՏԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 17-ի N 07/80-2/14547-14 և սեպտեմբերի 17-ի N 06/3-3/14523-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 02/6920-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 07/15/5078-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱՄ/22.2/9518-14 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 01/10.1/3549-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 6,294,900 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2014 թվականի օգոստոսի 25-ին կնքված N ՀՀ/ՏՐ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 6,294,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

COORDINATING COMMISSION OF ... * 02508251 *

V

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«10» սեպտեմբերի 2014.թ.

# «ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի տարածքի բարեկարգում »
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարեկարգել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի տարածքը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Խաչարձան գյուղ, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 6.294.900,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի համայնքը |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ օգոստոսի 25 -ից մինչեւ 2014թ. նոյեմբերի 25-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ օգոստոսի 25 -ից մինչեւ 2014թ. նոյեմբերի 25-ը բուժկետի տարածքի բարեկարգում 6.294.900,00 դրամ արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «N1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից բուժկետի տարածքի բարեկարգման իրականացում՝ 6.294.900,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ամսական եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինե Ղարիբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 948 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՍՈԹՔ - ՔԱՐՎԱՃԱՌ ԽԱՉՄԵՐՈՒԿԻ 1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ 13.65 ԿՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14930-14 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/15002-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/7019-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի Սոթք - Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կամուրջների կառուցման տեխնիկական հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ճաննախագիծ» ինստիտուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00813453) 2014 թվականի ապրիլի 7-ին կնքված N ԼՂՏՀ-Ճ-Կ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սոթք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կամուրջների կառուցման տեխնիկական հսկողության իրականացում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«12» սեպտեմբերի 2014թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սոթք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65 կմ երկարությամբ հատվածի կամուրջների կառուցման տեխնիկական հսկողություն»

ԾՐԱԳԻՐ

օժանդակ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Սյունիքի մարզ, ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.000.000,00 դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014 ապրիլի 07-ից մինչեւ 2014թ. դեկտեմբերի 07-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014 ապրիլի 07-ից մինչեւ 2014թ. դեկտեմբերի 07-ը իրականացնել ճանապարհի վերոնշյալ հատվածի կամուրջների կառուցման տեխնիկական հսկողությունը՝ 1.000.000,00 դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ-ի կողմից Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Սոտք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13.65կմ երկարությամբ հատվածի կամուրջների կառուցման տեխնիկական հսկողություն՝ 1.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 949 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՉԱՓԱՌ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14919-14 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/15001-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/7018-14 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 01/07-1/11321-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,241,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի շրջանի Չափառ գյուղի նորակառույց դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2014 թվականի օգոստոսի 28-ին կնքված՝ N ԱՎ-Մ-02/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված սարքավորումների ձեռքբերում՝ 1,241,200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«19» մայիսի 2014թ.

**« Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Չափառ գյուղի նորակառույց դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում»**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել «Հայաստան» համահայկական Հիմնադրամի կողմից կառուցած ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափառ գյուղի դպրոցը անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացված միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.241.200,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափառ գյուղի դպրոցը: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ օգոստոսի 28-ից մինչեւ 2014թ. նոյեմբերի 28-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սույն թվականի օգոստոսի 28-ից մինչեւ նոյեմբերի 28-ը ընկած ժամանակահատվածում «Հայաստան» համահայկական Հիմնադրամի կողմից կառուցած ԼՂՀ Մարտակերտի շրջանի Չափառ գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 1.241.200,00 ՀՀ դրամ արժեքով: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն՝ համակարգչային սարքավորումների ձեռքբերում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 1.241.200,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Ղարիբյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 950 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 10-ի N 07/80-2/14124-14 և սեպտեմբերի 10-ի N 06/3-3/14176-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 16-ի N 02/6848-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N 07/15/500114 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 01/15/3493-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 11,646,251 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վանևան համայնքի ոռոգման ջրի խորքային հորի վերականգնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բաղրամյանշին» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 04600132) հետ 2014 թվականի օգոստոսի 29-ին կնքված N WVA/VARD ADP/CW-14/005(RB)/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերականգման աշխատանքների իրականացում՝ 11,646,251 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝**
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Միրայր Էդիլյան

04 սեպտեմբերի 2014թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքի ոռոգման ջրի խորքային հորի վերականգնում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքում ոռոգման ջրի համակարգի բնականոն շահագործումը՝ տվյալ համայնքում ոռոգման ջրի խորքային հորի վերականգնման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br>Հասցեն՝ 7 ռուէ Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռ.: `+01 49 49 11 12 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնք<br>Բնագավառը՝ գյուղատնտեսություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է՝11,646,251 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 29 օգոստոսի 2014թ. - 29 նոյեմբերի 2014թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. օգոստոսի 29-ից մինչև 2014 թ. նոյեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքում իրականացնել ոռոգման ջրի խորքային հորի վերականգնման աշխատանքներ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 11,646,251 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքում ոռոգման ջրի խորքային հորի վերականգնման աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը հայտարարել է բաց մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն, որի հետ և կնքվել է շինարարական կապալի |



| | | |
|---|---|---|
| | | պայմանագիր: Աշխատանքները սկսվել են 2014թ. օգոստոսի 29-ին և ավարտվելու են մինչև 2014թ. նոյեմբերի 29-ը:<br>Ծրագրի իրականացման ընթացքում մասնավորապես իրականացվելու են հետևյալ աշխատանքները.<br>✓ հորատման աշխատանքներ<br>✓ փորձաքամիչային աշխատանքներ<br>✓ հողային, բետոնային և մեկուսիչ աշխատանքներ<br>✓ խողովակների և խողովակամրանների տեղադրում<br>✓ խորքային պոմպի տեղադրում<br>✓ ուժային տրանսֆորմատորի տեղադրում<br>✓ մետաղական ցանկապատի տեղադրում<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 11,646,251 (տասնմեկ միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաննան համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Վարդենիսի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ֆրանսիայի աջակցող գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 951 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ, ՎԱՐԴԵՆԻՍ, ԼՈՒՍԱԿՈՒՆՔ, ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԵՎ ԱՅՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14923-14 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/14999-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/7016-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 24-ի N 07/15/5202-14 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 01/15/3503-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 8,968,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Խաղահրապարակների տեղադրում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքներում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մագնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2014 թվականի օգոստոսի 28-ին կնքված N WVA/ADPS/BC/04/Order#2/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղասարքերի պատրաստում և մատակարարում՝ 8,968,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝

Ժիրայր Էդիլյան

10 սեպտեմբերի 2014թ.

**«Խաղահրապարակների տեղադրում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքներում»**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է խաղասարքերով համալրված խաղահրապարակներ տեղադրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքներում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության<br>*Ֆրանսիայի աջակցող գրասենյակ*<br>հասցե՝ Վիժն Դու Մոնդ, 7 ռուե Փասքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռախոս՝ +01 49 49 11 12<br>*Թայվան աջակցող գրասենյակ*<br>հասցե՝Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան, հեռախոս՝: +886-2-2175-1995 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքներ<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8,968,000 (ութ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 28 օգոստոսի 2014թ. – 11 հոկտեմբերի 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է 2014թ. օգոստոսի 28-ից մինչև 2014թ. հոկտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում խաղասարքերով համալրված խաղահրապարակներ տեղադրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքներում: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8,968,000 (ութ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Վարդենիս, Լուսակունք, Կարճաղբյուր և Այրք համայնքներում 7-12 տարեկան երեխաների համար նախատեսված խաղասարքերով համալրված խաղահրապարակներ տեղադրելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն մրցույթային կարգով ընտրել է կազմակերպություն և պայմանագիր է կնքել «Մազնոն» ԲԲԸ-ի հետ: Աշխատանքները սկսվել են 2014թ. օգոստոսի 28-ին և ավարտվելու են մինչև 2014թ. հոկտեմբերի 11-ը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8,968,000 (ութ միլիոն ինը հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է ՀՀ Գեղարքունիք մարզի Գավառի և Վարդենիսի քաղաքապետարանների, Կարճաղբյուրի, Լուսակունքի և Այրքի գյուղապետարանների հետ համագործակցելով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվելու է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Գավառի և Վարդենիսի Տարածքային Զարգացման Ծրագրերի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Ֆրանսիայի ու Թայվանի աջակցող գրասենյակների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան / K. Mayan

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 952 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՎ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Ջաններբ (քույր Արուսյակ)
Սաջոնյանի կողմից

__ սեպտեմբերի 2014թ

## «ԱՊԱՀՈՎ ՏՈՒՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ապահով, գոնե նվազագույն կոմունալ պայմաններով տան մեջ ապրելը կյանքի կարևոր որակներից մեկն է, որից, ցավոք, հաճախ զրկված են շատ աղքատ ընտանիքներ:<br>Այդպիսի ընտանիքներից մեկն է Արագածոտնի մարզի Արագած գյուղում ապրող 9 հոգանոց Կարապետյանների ընտանիքը (մայրը՝ Վերգինե Կարապետյանը, նրա հինգ աղջիկները և երեք անչափահաս աղջիկ թոռները, որոնցից մեկը հաշմանդամ է): Երեխաներից երկուսը այժմ ապրում և դաստիարակվում են Տիրամայր Հայաստանի Կուսաստանի կրթահամալիրում: Ընտանիքն ապրում է մի կիսակառույց գոմում, որը համարյա փլուզման ենթակա է, հատակը հող է, չկա տանիք, չկան ոչ մի կոմունալ պայմաններ, ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրականություն, նվազագույն կահույք: Ընտանիքում չկա մեկը, որը կարողանա հոգալ այդ կացարանի գոնե նվազագույն կարիքները և այն տարեց-տարի ավելի է քանդվում: Կուսաստանը այդ ընտանիքին օգնում է սնունդով և հագուստով, սակայն անհրաժեշտ է կատարել տան վերանորոգում, այլապես շատ շուտով ընտանիքի անդամները կզրկվեն նաև այդ կացարանից և կմնան բաց երկնքի տակ:<br>Ծրագրով նախատեսվում է վերանորոգել Արագածոտնի մարզի Արագած գյուղի Կարապետյանների ընտանիքի կացարանը, այն կահավորել, որպեսզի ընտանիքը կարողանա ունենալ ապրելու գոնե նվազագույն պայմամաններ:<br>Ծրագրում նախատեսվում է նաև սոցիալական և հոգեբանական օգնություն ապահովել, որպեսզի ընտանիքի անդամները կարողանան օգտվել վերանորոգված տան պայմաններից: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը ֆինանսավորում են ամերիկահայ և ֆրանսահայ անհատ բարերարներ: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Տիրամայր Հայաստանի Կուսաստանը *(հասցե՝ Գյումրի, Ե.Չարենցի 6; ՀՎՀՀ 05513266)*: |

| | | |
|---|---|---|
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Արագածոտնի մարզի Արագած գյուղում: Ծրագիրն առնչվում է սոցիալական ոլորտին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | • տան վերանորոգում-մոտ 16 միլիոն դրամ<br>• կահավորում- 1 միլիոն դրամ<br>• սոցիալական և հոգեբանական օգնություն- 750 հազար դրամ<br><u>Ընդամենը՝ 17'750'000 դրամ:</u> |
| 7 | Բարեգործություն ստացողը | Արագածոտնի մարզի Արագած գյուղի 9 հոգուց բաղկացած Կարապետյանների ընտանիքը: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի տևողությունը. 2014թ. սեպտեմբերի 30-ից 2015թ. փետրվար 28-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ 2014 թ, սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին-կացարանի վերանորոգում՝ 16 միլիոն դրամ<br>➢ 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին-կահավորում՝ 1 միլիոն դրամ<br>➢ 2014թ. սեպտեմբեր-2015թ. փետրվար ամիսներ-սոցիալական և հոգեբանական օգնություն – 750 հազար դրամ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ վերանորոգում, որի համար արդեն կնքվել է շինարարական կապալի պայմանագիր մրցույթի հաղթող «Հուն-Սավ» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի արժեքն է 15'821'920 դրամ<br>➢ անհրաժեշտ կահույքի, կացարանի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սարքերի ու սարքավորումների գնում: Նախատեսվում է գնել մոտ 1 միլիոն դրամի կահույք, սարքեր ու սարքավորումներ:<br>➢ սոցիալական օգնություն, որի շրջանակներում նախատեսվում է լուծել ընտանիքի անդամների անձնագրերի և ծննդականների, նպաստների և թոշակների նշանակման և այլ սոցիալական հարցեր, ընտանիքին օգնել սնունդով և հագուստով: Նախատեսվում է իրականացնել նաև հոգեբանական աջակցություն: Այս ամենի վրա նախատեսվում է ծախսել 750 հազար դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Արագածոտնի մարզպետարանի, ինչպես նաև՝ Արագած գյուղի գյուղապետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների:<br>Վերահսկողություն կիրականացվի նաև պետական մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 968 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/15726-14 և սեպտեմբերի 24-ի N 06/3-3/15355-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 02/7275-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 26-ի N ՖԲ/ԱնՄ-4/7674-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2015-2018 թվականներին իրականացվող՝ 1,586,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 011007617 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1,280,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Մեծն Ներսես» ԲՀԿ կազմակերպության
[illegible] Ս. Հա[illegible]ությունյան
«21» նոյեմբեր 2014թ.

## 2015-2018 թվականներին իրականացվող բարեգործական ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կազմակերպել զոհված զինծառայողների, երկկողմանի և միակողմանի ծնողազուր անչափահաս թվով շուրջ 600 երեխաների ամենամյա 6000 դրամական և պարբերաբա ապրանքային օգնություն, 18 տարին լրացած երեխաների փոխարեն ծրագրում ընդգրկ անչափահաս նոր երեխաների: Նախատեսել 2015-2018թթ. միակողմանի ծնողազուրկ սոցիալապես անապահո անչափահաս երեխաների, ինչպես նաև կազմակերպությունում հաշվառման վերցվա խաղաղ պայմաններում պարտականությունների կատարման ժամանակ զոհվա զինծառայողների 20-25 երեխաների, որոնք սովորում են բարձրագույն ուսումնակա հաստատություններում՝ ամենամյա դրամական և պարբերաբար ապրանքային օգնությու մինչև ուսման ավարտը: Ապրանքի տեսքով ստացված օգնությունը՝ հագուստ, կոշկեղեն, կենցաղային իրե մանկական սնունդ, խաղալիքներ, հիգենիկ և բուժ պարագաներ, բացի ծրագրու ընդգրկված բարեգործություն ստացողներից նախատեսել ՀՀ Սոցիալակա ապահովության նախարարությունում հաշվառման վերցված միայնակ տարեցների տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով սոցիալապես անապահով խավերի գիշերօթիկ և մանկական կրթական հաստատություններին, ինչպես նաև Վայոց Ձորի Թեմ հովանավորությամբ եղեգնաձորում գործող մանկական ճամբարին: Երևանի Նուբարաշեն ավանի թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոցում բնակվում և սովորու են թվով 80 երեխաներ, որոնց ուսումնական և կենցաղային պայմանների բարելավմա նպատակով նախատեսվում է դասասենյակների, խաղասենյակների, ճաշարանի և սպոր դահլիճի վերանորոգման աշխատանքներ և ձեռք բերել աշակերտական նստարաննե գրենական պիտույքներ և համակարգիչներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | 3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մաքսայի արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Արևելյան շրջանի Կիլիկյան թեմի Առաջնորդարանը: |

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն (ՀՀ ք. Երևան, Կորյունի 6ա, բն.1 ՀՎՀՀ 01513853), գրանցված պետռեգիստրում: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ մարզեր, ք. Երևան և ԼՂՀ: Բնագավառը սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 2015-2018թթ. համար նախատեսվում է 1.586.400 ԱՄՆ դոլար, որը բացի բարեգործություն ստացողներին տրվող ամենամյա օգնությունից (480.000 դոլար), առաջի կարգի հաշմանդամ ազատամարտիկների օգնության համար 54.000 դոլար, կազմակերպությունում հաշվառման վերցված խաղաղ պայմաններում պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների 20-25 ուսանողների օգնության համար, որոնք սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում 20.000 դոլար, թիվ 11 (հատուկ) օժանդակ դպրոցի համար նախատեսվող (133.200 դոլար) գումարից և կազմակերպական 8,4% ծախսերից, (133.200 դոլար) ներառում է նաև ներմուծվող ապրանքանյութական արժեքների շուրջ 720.000 ԱՄՆ դոլարը, ծրագրում ընդգրկված բարեգործություն ստացողների թվով 50 երեխաների համար, ամռան ամիսներին կազմակերպել ճամբար (28.000) դոլար, նախատեսել ներմուծել համեմատաբար քիչ շահագործված մեքենա 18000 դոլարի շրջանակներում, արդյունքում ընդհանուր ծախսերը մեկ տարվա կտրվածքով կազմում են շուրջ 396.600 ԱՄՆ դոլար: Ծրագրի ֆինանսավորումը 1993թ. ի վեր իրականացնում է ԱՄՆ Արևելյան շրջանի Կիլիկիո Թեմի Առաջնորդարանը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողները կազմակերպությունում հաշվառման են վերցվում ՀՀ պաշտպանության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների կողմից տրված փաստաթղթերի հիման վրա: Նպատակ ունենալով մեղմելու ՀՀ բնակվող ավելի քան 600 զոհված զինծառայողներ և երկկողմանի ծնողազուրկ անչափահաս երեխաների, ինչպես նաև առաջի կարգի հաշմանդամ ազատամարտիկների և գյուղական վայրերում բնակվող բազմազավակ ընտանիքների սոցիալական անապահով վիճակը: Նախատեսել կազմակերպությունում հաշվառման վերցված խաղաղ պայմաններում պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների 20-25 երեխաների, որոնք սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում ամենամյա դրամական և պարբերաբար ապրանքայի օգնություն մինչ ուսման ավարտը: Երևանի Նուբարաշեն ավանի թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոցի ընտրությունը կատարել է ԱՄՆ-ի Արևելյան շրջանի Կիլիկիո Թեմի Առաջնորդարանը, նպատակ ունենալով բարելավել, թվով 80 երեխաների ուսումնական և կենցաղային պայմանները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015-2018թթ.: |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **2015-2018թթ. Ծրագրի իրականացման համար նախատեսվում է՝ 1.586.400 ԱՄՆ դոլար**<br>1. Խաղաղ պայմաններում պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների, երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ անչափահաս թվով շուրջ 600 երեխաների: | 480.000 դոլար, տարեկան 120.000 դոլար |
| | | 2. Կազմակերպությունում հաշվառման վերցված խաղաղ պայմաններում պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների 20-25· երեխաների օժանդակության համար, որոնք սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: | 20.000 դոլար, տարեկան 5000 դոլար |
| | | 3.Ծրագրում ընդգրկված բարեգործություն ստացողների թվով 50 երեխաների համար, ամռան ամիսներին կազմակերպել ճամբար: | 28.000 դոլար, տարեկան 7000 դոլար |
| | | 4.Առաջի կարգի թվով 15 հաշմանդամ ազատամարտիկների օգնության համար: | 54000 դոլար, տարեկան 13500 դոլար |
| | | 5. Նուբարաշենի թիվ 11 (հատուկ) օժանդակ դպրոցի նորոգման աշխատանքների համար | 133200 դոլար, տարեկան 33.300 դոլար |
| | | 6. Նախատեսվում է ներմուծել մարդասիրական ապրանքանյութական արժեքներ՝ հագուստ, կոշկեղեն, կենցաղային իրեր, մանկական սնունդ, խաղալիքներ, հիգիենիկ և բուժ պարագաներ: | 720000 դոլար, տարեկան 180.000 դոլար |
| | | 7. Կազմակերպական ծախսեր՝ | 133200 դոլար, տարեկան 33.300 դոլար |
| | | *ա)* աշխատավարձ<br>*բ)* վառելիք<br>*գ)* կապ<br>*դ)* մեքենակազմի շահագործման ծախսեր<br>*ե)* գրասենյակի գործնեության հետ կապված այլ ծախսեր: | 104000 դոլար, տարեկան 26.000 դոլար<br>12000 դոլար, տարեկան 3000 դոլար<br>3200 դոլար, տարեկան 800 դոլար<br>8000 դոլար, տարեկան 2000 դոլար<br>6000 դոլար, տարեկան 1500 դոլար |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր երեխայի մինչև 18 տարին լրանալը ամսական կհատկացվի 6000 ական դրամ, իսկ ուսանողներին մինչև ուսման ավարտը 9000 ական դրամ, ինչպես նաև ապրանքի տեսքով ստացված օգնություն:<br>Վերանորոգման աշխատանքների ծրագիրը կիրականացվի 4 փուլով: Տվյալ հաստատությունում նախատեսվում է տարեկան շուրջ 33.300 դոլարի ներդրում:<br>Սահմանված կարգով պայմանագիր կկնքվի շինարարական կազմակեպության հետ, յուրաքանչյուր փուլում կկազմվի նախահաշիվ, որը կնդրկի կատարվելիք նորոգման աշխատանքների ծավալները, արժեքը և որակի ապահովման երաշխիքները:<br>Ծրագրի իրականացման ընթացքում ներմուծվելու է շուրջ 720000 դոլարի մարդասիրական ապրանքանյութական արժեքներ՝ հագուստ, կոշկեղեն, կենցաղային իրեր, մանկական սնունդ, խաղալիքներ, հիգիենիկ և բուժ պարագաներ, տարեկան կտրվածքով 180.000 դոլարի բեռ:<br>Գրասենյակի մեքենան արտադրված է 2004թ.՝ նախատեսել 18000 դոլարի շրջանակներում ներմուծելու համեմատաբար քիչ շահագործված մեքենա: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը կապված գրասենյակի գործնեության հետ կկազմեն ընդհանուր բյուջեի 8,4% կամ շուրջ 133.200 դոլար, յուրաքանչյուր տարվա կտրվածքով 33.300 դոլար (աշխատավարձ, մեքենակազմի շահագործում և կապ): |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի արդյունավետ իրականաման համար նախատեսում ենք համագործակցություն ՀՀ Սոցիալական Ապահովության նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման վերահսկողությունը կիրականացվի Առաջնորդարանի ներկայացուցչի, և "Մեծն Ներսես" բարեգործական կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի կողմից:<br>Կազմակերպության գործնեության վերաբերյալ սահմանված կարգով եռամսյա տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին պետեկամուտների կոմիտեին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 969 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՐԵՏՈՒՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/80-2/15998-14 և սեպտեմբերի 26-ի N 06/3-3/15567-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 02/7274-14, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի 07/15/5388-14 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 1 -ի N 01/15/3745-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 9,621,500 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տրետուք համայնքում ջրագծի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239826) 2014 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N 01/09-14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրագծերի մոնտաժում՝ 6,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«ԿԱՄՐՋԱԿ» «МОСТИК» «LITTLE BRIDGE» 01003187

Հաստատված է
"Կամրջակ" սոցիալ բարեգործական հասարակական
կազմակերպության տնօրեն Բ. Աղամալյանի կողմից
**12.09.2014թ.**

# ՀՀ Գեղարքունիքի մարզի Տրետուք համայնքում ջրագծի կառուցման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է 1500 մետր խմելու ջրագծի կառուցումով ապահովել համայնքի բնակիչների ջուրի օգտագործման հիմնախնդիրը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագրի կատարողը | "Կամրջակ"ՍԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան Զ.Քանաքեռցու 129/5, Աշխ.՝ Կորյունի 3-14/1, հեռ՝ 516-044, ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնազավառը | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիկի մարզի Տրետուք գյուղ, բնազավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 9,621,500 (ինը միլոն վեցհարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր) դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիկի մարզի Տրետուք համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 30-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Վեստ Պլաստ Գրուպ»ՍՊԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար 6.500.000 (վեց միլոն հինգ հարյուր հազար դրամ ) առանց ԱԱՀ-ի: Կնքվել է պայմանագիր քաղաքացի Գագիկ Հունանյանի հետ, որով նա պարտավորվում է կատարել հողային աշխատանքները 3,121,500 (երեք միլոն հարյուր քսանմեկ հազար հինգհարյուր) դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Վեստ Պլաստ Գրուպ»ՍՊԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար 6.500.000 (վեց միլոն հինգ հարյուր հազար դրամ ) առանց ԱԱՀ-ի: Իսկ հողային աշխատանքները՝ 3,121,500 (երեք միլոն հարյուր քսանմեկ հազար հինգհարյուր ) դրամ արժողությամբ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակծությունը,պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականցման ընթացքում համագործակցելու ենք Տրետուքի գյուղապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Տրետուքի գյուղապետարանի աշխատակիցների կողմից և աշխատանքները կատարելուց հետո Հայաստանիչ Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 970 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-625-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 07/80-2/ -14 և սեպտեմբերի -ի N 06/3-2/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված բիտումը (5 տեղ, 113,12 կգ ընդհանուր քաշով, 68,436 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում» ծրագրի մասին» N Մ-625-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 971 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/16101-14 և հոկտեմբերի 1-ի N 6/5-1/16134-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված տեսաձայնային համակարգի ապրանքները (1 տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 20,550 եվրո արժողությամբ, այդ թվում 400 եվրո բեռնափոխադրման ծախսերը, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 972 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N Մ-471-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/16110-14 և հոկտեմբերի 3-ի N 6/3-3/16334-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 23-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին» N Մ-471-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 4.1 ենթակետում «Սարքավորումներ» բառը փոխարինել «Սարքավորումներ և շինարարական նյութեր» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված լամինացված նրբատախտակը (27 տեղ, 21,924 կգ ընդհանուր քաշով, 24,320.41 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 2,045,500 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 973 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 07/80-2/ -14 և սեպտեմբերի -ի N 06/3-3/ -14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-4/ -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (502 տեղ, 3,734 կգ ընդհանուր քաշով, 18,022.35 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 4,680 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 974 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/15830-14 և սեպտեմբերի 27-ի N 06/5-1/15679-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամստերդամի Նատուրա Արտիս կենդանաբանական այգու կողմից Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հասցեով որպես օժանդակություն ստացված կենդանաբանական այգիների համար անհրաժեշտ պարագաները (32 տեղ, 5508 կգ ընդհանուր քաշով, 32 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 3,482,000 դրամ, «ՄԾՓ» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 975 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N 07/80-2/ -14 և սեպտեմբերի -ի N 06/3-3/ -14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի -ի N ԱՄ/22.2/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիքերըս հասարակական կազմակերպության կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (Rocuronium 10mg/ml, 1 տեղ, 16 կգ ընդհանուր քաշով, 4,650 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1,007.15 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 976 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/15822-14 և սեպտեմբերի 26-ի N 06/5-1/15526-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱՄ/22.2/9896-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի մանկական համալսարանական հիվանդանոց – Էլեոնորեն հիմնադրամի պրոֆեսոր Մարկուս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված համակարգչային տոմոգրաֆի ինժեկտորային համակարգը (1 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 10,000 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1,006 շվ. ֆրանկ, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 977 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-359-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/80-2/15959-14 և սեպտեմբերի 30-ի N 06/3-3/15872-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անի Բեզիկյան» երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-359-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մազնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2014 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված՝ N 10/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական կոնստրուկցիաների պատրաստում՝ 8,120,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 978 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/15835-14 և սեպտեմբերի 30-ի N 06/3-3/15871-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վալենսիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835704) 2014 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 26 գրասենյակային աթոռի ձեռքբերում՝ 1,280,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**7 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 979 -Ա**

**(Որոշումն ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 3-ի նիստին)**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/16080-14 և հոկտեմբերի 6-ի N 06/3-3/16080-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2014 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում՝ 238,771 դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 980 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/16069-14 և հոկտեմբեր 2-ի N 06/3-3/16526-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2014 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրատար խողովակների ձեռքբերում՝ 6,740,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2014 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրատար խողովակների ձեռքբերում՝ 412,920 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2014 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրատար խողովակների ձեռքբերում՝ 14,617,080 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2014 թվականի սեպտեմբերի 16-ին կնքված N 04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրատար խողովակների ձեռքբերում՝ 7,657,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հորիզոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513552) 2014 թվականի սեպտեմբերի 16-ին կնքված N 04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրի մղման համակարգերի ձեռքբերում և մոնտաժում՝ 5,735,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 981 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/80-2/15951-14 ու հոկտեմբերի 1-ի N 06/5-1/16026-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱՄ/22.2/10045-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Direct Relief International» հասարակական կազմակերպության կողմից ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (22 տեղ, 5,674 կգ ընդհանուր քաշով, 134,058.36 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,505, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 982 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 30-ի N 07/80-2/15955-14 ու հոկտեմբերի 1-ի N 06/5-1/16025 -14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱՄ/22.2/10046-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «AmeriCares» հասարակական կազմակերպության կողմից ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (25 տեղ, 5,258 կգ ընդհանուր քաշով, 1,485,849.58 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7,050 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 983 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/15817-14 և սեպտեմբերի 25-ի N 06/5-1/15466-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 26-ի N 1/06/959-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դանիական միջմշակութային ծրագրերի ասոցիացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված սպորտային հանդերձանքը (2,370 տեղ, 1,608.26 կգ ընդհանուր քաշով, 23,949.69 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,078.46 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 984 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/80-2/15821-14 և սեպտեմբերի 27-ի N 06/5-1/15680-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-4/7873-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու խմբաքանակ սննդամթերքը ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա, 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա և 2014 թվականի ապրիլի 4-ի N Մ-257-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) բրինձ՝ 440 տեղ, 22,052,80 կգ ընդհանուր քաշով, 41,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է.

2) տոմատի մածուկ՝ 1,850 տեղ, 20,357.40 կգ ընդհանուր քաշով, 45,646 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բաշխման ցանկը կցվում է:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 07417 04.08.2014

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բրինձ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 370 | 700 |
| | | | Այգուտ | 164 | 832 | 1,551 |
| | | | Մարտունի | 73 | 370 | 690 |
| | | | Դպրաբակ | 81 | 410 | 766 |
| | | | Վահան | 188 | 950 | 1,778 |
| | | | Կալավան | 23 | 116 | 218 |
| | | | Բարեպատ | 6 | 30 | 57 |
| | | | Զորավանք | 31 | 155 | 293 |
| | | | Անտառամեջ | 22 | 110 | 208 |
| | | | Գավառ | 61 | 309 | 577 |
| | | | Թթուջուր | 81 | 410 | 766 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 257 | 482 |
| | | Արարատի մարզ | Վերի | 17 | 86 | 161 |
| | | | Արտաշատ | 16 | 81 | 151 |
| | | | Գետազատ | 39 | 195 | 369 |
| | | | Մրգանուշ | 16 | 81 | 151 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 66 | 123 |
| | | | Սևաբերդ | 41 | 208 | 388 |
| | | | Զորաղբյուր | 18 | 90 | 170 |
| | | | Աբովյան | 38 | 192 | 359 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 244 | 454 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 76 | 142 |
| | | | Իջևան | 18 | 92 | 170 |
| | | Երևան | | | | |
| | Ընդամենը | | 3201 | | 16270 | 30,275 |
| | | | 4335 | | 22000 | 41,000 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* *Բ. Ջամբազյան*

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 07726 04.09.2014

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Տոմատի մածուկ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 303 | 779 |
| | | | Այգուտ | 164 | 672 | 1,727 |
| | | | Մարտունի | 73 | 299 | 769 |
| | | | Դպրաբակ | 81 | 332 | 853 |
| | | | Վահան | 188 | 770 | 1,979 |
| | | | Կալավան | 23 | 94 | 242 |
| | | | Բարեպատ | 6 | 25 | 63 |
| | | | Զորավանք | 31 | 127 | 326 |
| | | | Անտառամեջ | 22 | 90 | 232 |
| | | | Գավառ | 61 | 250 | 642 |
| | | | Թթուջուր | 81 | 332 | 853 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 209 | 537 |
| | | Արարատի մարզ | Վերի | 17 | 70 | 179 |
| | | | Արտաշատ | 16 | 69 | 168 |
| | | | Գետազատ | 39 | 160 | 411 |
| | | | Մրգանուշ | 16 | 65 | 168 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 53 | 137 |
| | | | Սևաբերդ | 41 | 168 | 432 |
| | | | Զորաղբյուր | 18 | 74 | 190 |
| | | | Աբովյան | 38 | 156 | 400 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 195 | 505 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 61 | 158 |
| | | | Իջևան | 18 | 74 | 190 |
| | | Երևան | | | | |
| | Ընդամենը | | 3201 | | 13112 | 33,703 |
| | | | 4335 | | 17760 | 45,646 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* *Բ. Ջամբազյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 985 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 7-ի N 07/80-2/11464-14 և հոկտեմբերի 1-ի N 06/3-3/16141-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) ԱՄՆ-ի քաղաքացի Սերոժ Ապրահամյանի հետ (կացության քարտ՝ AE0008677, հասցեն՝ քաղ. Երևան, Բաղրամյան 70, բն. 94) 2014 թվականի փետրվարի 4-ին կնքված N 02-04.02.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բռեյքդանսի դասընթացների անցկացում՝ 1,444,285 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ԱՄՆ-ի քաղաքացի Էրիկ Գրիգորյանի հետ (անձնագիր՝ 499800043, փաստացի բնակության հասցեն՝ քաղ. Երևան, Գ. Հովսեփյան 10, բն 2) 2013 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N 01-02.02.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսանկարչության դասընթացների անցկացում՝ 2,485,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) ԱՄՆ-ի քաղաքացի Դիանա Մարկոսյանի հետ (անձնագիր՝ 454474226, փաստացի բնակության հասցեն՝ քաղ. Երևան, Տերյան 56, բն. 42) 2014 թվականի հունվարի 9-ին կնքված N 01-10.02.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆոտոլրագրության դասընթացների անցկացում՝ 491,931 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ներքին հարդարման աշխատանքներ 1,500,000.00 դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ)<br>2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>3. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված |



| | | |
|---|---|---|
| | | հարկային արտոնություններից)<br>5. Խեցեգործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>6. Փայտամշակման արհեստանոցի կահույք, կահույքի հումք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>7. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնու-թյուններից)<br>8. Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000.00 (երկու միլիոն) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>9. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի էլեկտրական և այլ սարքեր և գործիքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>10. Նկարչական և խեցեգործական արհեստանոցի համար վրձին ներկեր, նյութեր, գլազուր, կավ և այլն 850,000.00 (ութ հարյուր հիսուն հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>11. Փայտամշակման արհեստանոցի սարքավորումներ 450,000.00(չորս հարյուր հիսուն հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>12. էլեկտրաէներգիայի ծախս 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ<br>13.Ինտերնետի գծով ծախս 120,000.00 (Մեկ հարրուր քսան հազար) ՀՀ դրամ<br>14. Գազաֆիկացում 600,000.00 (վեց հայուր հազար) ՀՀ դրամ<br>15.Անվտանգության համակարգ՝ տարեկան սպասարկումով 280,000.0 (Երկու հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ: (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>16. Մինիվան տեսակի ավտոբուսի ձեռք բերում Ճապոնիայից 1,600,000.00 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից) |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 1.Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ գծով ծախսեր 600,000.00 (Վեց հարյուր հազար) ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով . |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: Վերահսկողությունը կիրականացվի հաշվետվությունների տեսքով |

11/14/15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1000 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 5-ի N 07/80-2/13743-14 և սեպտեմբերի 9-ի N 06/5-1/13947-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության հասցեով Գերմանիայից ստացված բեռը՝ փայտամշակման արհեստանոցի համար հատուկ սեղան (մեկ տեղ, 120 կգ ընդհանուր քաշով, 994,84 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 150 եվրո, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (2014 թվականի մարտի 14-ի N Մ-197-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ- 999 -Ա որոշումների խմբագրությամբ):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1001-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N 07/80-2/14385-14 և սեպտեմբերի 12-ի N 06/5-1/14330-14, ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N ՖԲ/ԱնՄ-3/7330-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի անհատ բարերար Ստեփան Գյումրիկյանի կողմից «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (57 տեղ, 1,045 կգ ընդհանուր քաշով, 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 250 ԱՄՆ-ի դոլար) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության շահառուների և անդամների համար:

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1002-Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՎԱՍԱՅԼԱԿՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԲԱՇԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/14427-14 և սեպտեմբերի 12-ի N 06/5-1/14357-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 16-ի N 02/6845-14 և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 12-ի N ՖԲ/ԱնՄ-3/7331-14 եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 16,649,059.5 դրամ արժողությամբ «Անվասայլակների ներկրում և մասնագիտացված բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

<<Սատար>> Հաշմանդամների հասարակական կազմակերպության

Խորհրդի կողմից

«09» 09. 2014թ.

## Անվասայլակների ներկրման և մասնագիտացված բաշման
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել հաշմանդամների շարժունակությունը և հարմարավետ սայլակների տրամադրումը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով օրենքով նախատեսված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ Յուտա Նահանգի Սոլտ Լեյկ Սիթից Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի |
| 4. | Ծրագիրը կատարողը | <<Սատար>> հաշմանդամների հասարակական կազմակերպություն: Ք. Երևան Մանանդյան 1ա շ. Բն. 29 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ ողջ տարածք, սոցիալական օգնություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | **16 649 059.5** ՀՀ դրամ/ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Այդ պարագաների կարիքը ունեցող ՀՀ բնակիչներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Սկիզբ 01.10.2014թ., ավարտը 01.04.2015թ-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. 23.09.2014թ-ից 27.09.2014թ-ը, Սայլակների ճիշտ օգտագործման և տրամադրման 5 օրյա դասնթաց, դասնթացի գումար 510 000 ՀՀ դրամ: 2. Հաշմանդամի սայլակները և պարագաները կտեղափոխվեն մարզեր, և կտրամադրվեն ըստ կարիքի, համագործակցելով շահագրգիռ մարմինների հետ: Պարագաների բաշխումը կիրականացվի կամավորական հիմունքներով, դասնթացն ավարտած մասնագետների ներգրավմամբ, 01.10.2014թ-ից մինչև 01.04.2015թ-ը, որի կազմակերպչական ծախսերը կազմում է **1 773 500** ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Հաշմանդամների սայլակներ 12 686 117.5 ՀՀ դրամ, ձեռնափայտեր 147 600 ՀՀ դրամ, քայլակներ 311 600 ՀՀ դրամ, պահեստամասեր 94 300 ՀՀ դրամ, հեղուկ բարձիկներ 906 510 ՀՀ դրամ, հենակներ 219 432 ՀՀ դրամ, |

| | | |
|---|---|---|
| | | /ՎՌՍ-ի ներդրում/ որը կազմում 14 365 559.5 ՀՀ դրամ:<br>2. Սայլակների ճիշտ օգտագործման և տրամադրման 5 օրյա դասնթացի համար /ՎՌՍ-ի ներդրում/ 510 000 ՀՀ դրամ:<br>3. Ծառայություններ՝ դասընթացավարի, խորհրդատվություն, սայլակներից օգտվելու հմտությունների ուսուցում, համապատասխան սայլակների տրամադրում /<<Սատար>>ի ներդրում/<br>4. Հաշմանդամային պարագաների բաշխման, ներդրում /ՀՀ Կառավարության ներդրում/, որը կազմում է 1 773 500 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տրանսպորտային ծախս՝ ծրագիրը ՀՀ ամբողջ տարածքով անցկացնելու համար<br>Սայլակների տեղափոխման համար 640 500 ՀՀ դրամ, բժշկի, տեխնիկի և կամավորի տեղափոխում տաքսիով 366 000 ՀՀ դրամ, հյուրանոցի վարձակալում՝ 416 000 ՀՀ դրամ, օրապահիկի գումար 351 000 ՀՀ դրամ, /ՀՀ կառավարության ներդրում/:<br>/ՎՌՍ-ի ներդրում/<br>գործիքներ 180 000 ՀՀ դրամ<br>Սայլակների ճիշտ օգտագործման և տրամադրման դասնթացի Գրենական պիտույքների 32 000 ՀՀ դրամ, Օրապահիկ 32 000 ՀՀ դրամ, մասնակիցների ճանապարհածախս 150 000 ՀՀ դրամ, Պլակատներ տպել 30 000 ՀՀ դրամ, ավարտական վկայագրերի տպում 6 000 ՀՀ դրամ:<br>Ընդհանուր պահանջվող ծախսերը կազմում է 2 203 500 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական հարցերի նախարարություն, Տեղական ինքնակառավարման մարմիններ և շահագրգիռ կազմակերպություններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվեն՝ հաշվետվություններ, ինչպես և համաձայն կնքված համաձայնագրերի ՎՌՍ-ին, Սոցապ նախարարությանը: |

Կազմակերպության Նախագահ՝ Հ. Հունանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1003-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Այբ» կրթական հիմնադրամի 2014 թվականի սեպտեմբերի 8-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/5-1/15024-14 և սեպտեմբերի 25-ի N 07/80-2/15378-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա, 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-436-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 6-ի Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետում «739,125.000 դրամ» բառերը փոխարինել «937,500.000» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում «դպրոցական ավտոբուսներ, այդ թվում՝ ներմուծում 24,000,000 դրամ» բառերը փոխարինել «դպրոցական ավտոբուսներ, այդ թվում՝ ներմուծում 57,000,000 դրամ» բառերով (խմբագրված ծրագիրը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
**«Այբ» կրթական հիմնադրամի**
**Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից**
**08-ը սեպտեմբերի, 2014թ.**

# «Այբ ավագ դպրոց»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է ստեղծել ավագ դպրոց 2 մասնաշենքով՝ 216 երեխայի համար: Դպրոցը դառնալու է հայկական առաջին դպրոցական ավանի հիմնական բաղադրիչը, ապահովելու է բարձրորակ կրթություն՝ որակյալ ուսուցիչների, հագեցած ու արդիական կրթական միջավայրի, աշխարհի լավագույն դասագրքերի օգնությամբ: Ավագ դպրոցը ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական հանգույց» ծրագրի:<br><br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն է: Նման կրթություն տալու, ուսյալ, առաքինի, ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվում է «Այբ» ավագ դպրոցը: Դպրոց, որը կդառնա 21-րդ դարի հայկական դպրոցի օրինակելի մոդել և իր դրական ազդեցությունը կունենա ողջ կրթական համակարգի վրա: Յանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բացառապես բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Յայաստանի Յանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՅՅ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Յիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՅՅ-ի տարածքում ձեռքբերվող տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի, մասնագետների վերապատրաստման,նախագծային, փորձաքննական, շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՅ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամին նվիրաբերված միջոցների հաշվին (աջակիցների ցանկը ներկայացված է «Այբ» ավագ դպրոց գրքույկում՝ «Աջակիցներ» բաժնում) |

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝<br>▪ ՀՎՀՀ 01558429<br>▪ Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>▪ Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 005-053483-001<br>▪ Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը որակվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է Երևանում՝ Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում կառուցել, կահավորել, ուսումնական, լաբորատոր և համակարգչային սարքավորումներով հագեցնել, ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով (այդ թվում՝ դասագրքեր, ուսումնական տպագիր և տեսաձայնային ձեռնարկներ) զինել «Այբ» ավագ դպրոցը՝ իր երկու մասնաշենքերով և օժանդակ կառույցներով:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 937.500.000 դրամ, որը ներառում է շինարարության, սարքավորումների և տեխնիկայի ծախսերը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողները «Այբ» ավագ դպրոցի (**«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ**) սաներն են: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 2011թ. նոյեմբերի 15, ավարտը՝ 2014թ. սեպտեմբերի 30, տևողությունը՝ 35 ամիս: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը նախատեսում է «Այբ» ավագ դպրոցի Ա մասնաշենքի կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, դպրոցական ավտոբուսների գնում, ինչպես նաև դպրոցի Բ մասնաշենքի և կաթսայատան կառուցում, կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, տարածքի բարեկարգում:<br>Աշխատանքները կավարտվեն 2013թ. դեկտեմբերին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 937.500.000 դրամ, որից Շինարարություն՝ 744.750.000 դրամ, Տեխնիկա/սարքավորումներ՝ 192.750.000 դրամ:<br>Ընդհանուր առմամբ նախատեսված է 325.190.000 դրամի ներմուծում: |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում. |

| | 000 AMD |
|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ) | 937,500 |
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** | **744,750** |
| Այդ թվում՝ | |
| **ՀՀ-ից** | **575,375** |
| **Ներմուծում** | **169,375** |
| Նախագծում, փորձաքննություն, վերահսկողություն | 8,500 |
| Շինարարություն | 520,000 |
| Այդ թվում՝ ներմուծվող շինարարական նյութեր | 100,000 |
| Կահավորում | 112,500 |
| Այդ թվում՝ ներմուծվող կահույք | 11,250 |
| Անվտանգության համակարգեր, սերվեր | 66,250 |
| Այդ թվում՝ ներմուծվող սարքավորումներ | 53,125 |
| Բարեկարգում/ցանկապատում/կոմունիկացիաներ | 37,500 |
| Այդ թվում՝ ներմուծում | 5,000 |
| **ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ** | **192,750** |
| Այդ թվում՝ | |
| **ՀՀ-ից** | **36,935** |
| **Ներմուծում** | **155,815** |
| Տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր | 1,875 |
| Համակարգիչներ, ներկայացման և կապի տեխնիկա, սարքավորումներ | 86,875 |
| Այդ թվում՝ ներմուծվող սարքավորումներ | 72,815 |
| Խոհանոցային սարքավորումներ | 41,000 |

| | | |
|---|---|---|
| | | Այդ թվում՝ ներմուծվող սարքավորումներ — 26,000<br>Դպրոցական ավտոբուսներ — 63,000<br>Այդ թվում՝ ներմուծում — 57,000 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն,և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Արամ Փախչանյան (Ռուսաստան)<br>3. Դավիթ Յան(Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաելյան(ԱՄՆ)<br>5. Կարո Սարգսյան (Ռուսաստան)<br>6. Դավիթ Փախչանյան (Ռուսաստան):<br><br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1004 - Ա**
**քաղ. Երևան**

# «ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՅԲ» ԴՊՐՈՑԻ «Գ» ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14844-14 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/15009-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 02/7020-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) իրականացվող՝ 1,994,500.000 դրամ ընդհանուր արժողությամբ «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. «Այբ» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«Այբ» կրթական հիմնադրամի**

**Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից**

**25 սեպտեմբերի, 2014թ.**

# «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցման
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է ստեղծել «Այբ» դպրոցի երրորդ՝ Գ մասնաշենքը՝ 180 երեխայի համար:<br>«Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցումը հանդիսանում է «Այբ ավագ դպրոց» ծրագրի շարունակությունը, որը որակվել է բարեգործական ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Ս-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Ս - 893 – Ա, 07.06.2013թ. N Ս-436-Ա և 06.12.2013թ. N Ս-1194-Ա որոշումների խմբագրությամբ: Այն ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական հանգույց» ծրագրի:<br><br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն է: Նման կրթություն տալու, ուսյալ, առաքինի, ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվել և զարգացվում է «Այբ» դպրոցը: Դպրոց, որը կդառնա 21-րդ դարի <u>հայկական դպրոցի</u> օրինակելի մոդել և իր դրական ազդեցությունը կունենա ողջ կրթական համակարգի վրա: Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տպագիր և էլեկտրոնային ուսումնական նյութերի, մասնագետների վերապատրաստման,նախագծային, փորձաքննական, շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամ |

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝<br>▪ ՀՎՀՀ 01558429<br>▪ Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>▪ Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ005-053483-001<br>▪ Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.<br>1. «Այբ ավագ դպրոց» ծրագրի շրջանակներում Երևանի Այբ դպրոցի («Այբ կրթական հանգույց» հիմնադրամի) շինարարության, սարքավորումների և նյութերի ներմուծման, տպագիր և էլեկտրոնային նյութերի ձեռքբերման ծրագիրը <u>որակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Ս-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Ս - 893 – Ա, 07.06.2013թ. N Ս-436-Ա և 06.12.2013թ. N Ս-1194-Ա որոշումների խմբագրությամբ:<br>2. «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի Ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>որակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Ս-851-Ա որոշմամբ:<br>3. «ԱյբԼաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագրի շրջանակներում Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի քիմիայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը <u>որակվել է բարեգործական</u>՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. հուլիսի 27-ի N Ս-626-Ա որոշմամբ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է Երևանում Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1,994,500.000 դրամ, որը ներառում է շինարարության, սարքավորումների և տեխնիկայի ծախսերը, ծրագրի կազմակերպման ընդհանուր ծախսեր՝ այդ թվում աշխատավարձ և վարչական ծախսեր : |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողները Երևանում տեղակայված ոչ պետական **«ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպությունն ու «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը**: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 2014թ. սեպտեմբերի 15, ավարտը՝ 2017թ. սեպտեմբերի 31, տևողությունը՝ 36 ամիս: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը նախատեսում է «Այբ» միջին դպրոցի Գ մասնաշենքի կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում, դպրոցական ավտոբուսների գնում, տարածքի բարեկարգում:<br>Աշխատանքները կավարտվեն 2017թ. սեպտեմբերին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 1,906,700,000 դրամ, որից Շինարարություն – |

<table>
<tr><td></td><td></td><td>1,812,400,000 դրամ, Տեխնիկա/սարքավորումներ – 94,300,000 դրամ:</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում.
<table>
<tr><td></td><td>'000 AMD</td></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>1,906,700</td></tr>
<tr><td>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ</td><td>1,812,400</td></tr>
<tr><td>Նախագծում, փորձաքննություն, վերահսկողություն</td><td>23,400</td></tr>
<tr><td>Շինարարություն</td><td>1,575,000</td></tr>
<tr><td>Անվտանգության համակարգեր, սերվեր</td><td>34,000</td></tr>
<tr><td>Բարեկարգում/ցանկապատում/կոմունիկացիաներ</td><td>20,000</td></tr>
<tr><td>Կահավորում</td><td>160,000</td></tr>
<tr><td>ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ</td><td>94,300</td></tr>
<tr><td>Տեղեկատվական համակարգեր/ուսումնական ծրագրեր</td><td>2,300</td></tr>
<tr><td>Տեխնիկա, սարքավորումներ</td><td>62,000</td></tr>
<tr><td>Դպրոցական ավտոբուսներ</td><td>30,000</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ընդհանուր ծախսերը կազմում են՝ 87,800,000 դրամ, որից.<br>Ծրագրային աշխատավարձ – 80,000,000 դրամ<br>Ծրագրային վարչական ծախսեր – 7,800,000 դրամ
<table>
<tr><th>Հաստիք</th><th>Ամսական աշխատավարձի ֆոնդ ներառյալ հարկերը<br>'000 AMD</th><th>Ամբողջ ծրագրի րականացման ընթացքում աշխատավարձի ֆոնդ՝ ներառյալ հարկերը<br>'000 AMD</th></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>2,222.2</td><td>80,000</td></tr>
<tr><td>Ծրագրի պատասխանատու, շինարարության ղեկավար</td><td>930,9</td><td>33,513</td></tr>
<tr><td>Ֆինանսական վերահսկող</td><td>359,2</td><td>12,931</td></tr>
<tr><td>Տեխնիկական վերահսկող</td><td>533,0</td><td>19,188</td></tr>
<tr><td>Գնումների մասնագետ</td><td>399,1</td><td>14,368</td></tr>
</table></td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն,և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի</td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td>հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Լևոն Ղազարյան (ԱՄՆ)<br>3. Դավիթ Յան(ԱՄՆ, Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաելյան (ԱՄՆ)<br>5. Արտաշես Շիրիկյան (Հայաստան, Ռուսաստան)<br>6. Աշոտ Թումասյան (Ռուսաստան):<br><br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:</td></tr>
</table>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1005-Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՅԲ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՖԱԲԼԱԲ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14835-14 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/15006-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 22-ի N 02/6983-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան 0009, Կորյունի 19ա, ՀՎՀՀ՝ 01558429) իրականացվող՝ 100,050.000 դրամ ընդհանուր արժողությամբ «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագիրը (կցվում է):

2. «Այբ» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Այբ» կրթական հիմնադրամի

Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյանի կողմից

25 սեպտեմբերի, 2014թ.

# «ՖաբԼաբ» արհեստանոց-լաբորատորիա

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է «Այբ» ավագ դպրոցին կից ստեղծել «ՖաբԼաբ» արհեստանոց-լաբորատորիա: «ՖաբԼաբ»-ը հատուկ սարքավորումներով համալրված արհեստանոց-լաբորատորիա է, որը թույլ է տալիս մեկական օրինակով ստեղծել գրեթե ցանկացած իր կամ մշակում: Դպրոցում «ՖաբԼաբ»-ը հնարավորություն կտա մարմնավորել, փորձարկել և զարգացնել աշակերտների մտահղացումները ռոբոտիկա, ֆիզիկա, տեխնոլոգիա, մեխանիկա և այլ առարկաներից:<br>«ՖաբԼաբ»-երը մշակվել են Մասաչուսեթսի Տեխնոլոգիական Ինստիտուտի (MIT) կողմից և այժմ ակտիվ տարածվում ու ցանցավորվում են աշխարհում՝ հիմնադրվելով հիմնականում կրթական հաստատություններում: Ստեղծվելիք «ՖաբԼաբ»-ը կլինի առաջինը տարածաշրջանում:<br>«ՖաբԼաբ»-ը հանդիսանում է «Այբ ավագ դպրոց» ծրագրի շարունակությունը, որը որակվել է բարեգործական ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 - Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ: Այն ստեղծվում է ի կատարումն ՀՀ կառավարության թիվ 50Ա առ 14.01.2010թ. որոշմամբ ամրագրված «Այբ կրթական հանգույց» ծրագրի:<br>**Ծրագրի անհրաժեշտությունը**<br>21-րդ դարում երկրի մրցունակության ապահովման կարևորագույն գործոնը որակյալ կրթությունն ու լայն հնարավորություններն են: Նման կրթություն, հնարավորություններ տալու, ուսյալ, առաքինի, ապագան կերտելու պատրաստ սերունդ ձևավորելու նպատակով էլ ստեղծվել է «Այբ» դպրոցը: «ՖաբԼաբ»-ը կոչված է նոր որակ հաղորդել կրթությանը՝ կիրառական դարձնելով այն: Ստեղծելով «ՖաբԼաբ» Հայաստանը դառնում է մեծ միջազգային կրթական ցանցի անդամ՝ մուտք ստանալով դեպի նոր տեխնոլոգիաներ, գիտելիք և փորձ:<br>Հանդիսանալով ոչ առևտրային կազմակերպություն՝ «Այբ»-ն իր գործունեությունն ու զարգացումն ապահովում է բարերարների նվիրատվությունների հաշվին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակը Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելն է, համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի դրույթների: Մասնավորապես՝ ծրագրի շրջանակներում Հիմնադրամի սեփական միջոցների և հանգանակությունների հաշվին արտերկրից ներմուծվող և ՀՀ-ի տարածքում ձեռքբերվող տեխնոլոգիաների, փորձաքննական, շինարարական աշխատանքների և շինանյութերի, սարքավորումների, կապուղիների, կահույքի, տեխնիկայի ազատումը մաքսային պարտադիր վճարումներից և ԱԱՀ-ից: |
| 3. | Բարեգործը | «Այբ» կրթական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Այբ» կրթական հիմնադրամը, որի տվյալներն են՝<br>• ՀՎՀՀ 01558429<br>• Հասցեն՝ Երևան 0009, Կորյունի 19ա<br>• Հաշվարկային հաշիվ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ 005-053483-001<br>• Գործադիր տնօրեն՝ Դավիթ Սահակյան:<br>«Այբ» կրթական հիմնադրամի իրականացրած<br>1. «Այբ ավագ դպրոց» ծրագրի շրջանակներում Երևանի Այբ դպրոցի («Այբ կրթական հանգույց» հիմնադրամի) շինարարության, սարքավորումների և նյութերի ներմուծման, տպագիր և էլեկտրոնային նյութերի ձեռքբերման ծրագիրը որակվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ՝ 09.11.2012թ. N Մ - 893 - Ա, 07.06.2013թ. N Մ-436-Ա և 06.12.2013թ. N Մ-1194-Ա որոշումների խմբագրությամբ:<br>2. «ԱյբԼաբ» ծրագրի շրջանակներում Երևանի Ֆիզմաթ դպրոցի ֆիզիկայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը որակվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 14-ի N Մ-851-Ա որոշմամբ:<br>3. «ԱյբԼաբ-ուսումնական առարկայական լաբորատորիաներ-Վաղարշապատ» ծրագրի շրջանակներում Վաղարշապատի Խ. Աբովյանի անվ. # 4 հիմնական դպրոցի քիմիայի լաբորատորիայի համար սարքավորումների և նյութերի ներմուծման ծրագիրը որակվել է բարեգործական՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. հուլիսի 27-ի N Մ-626-Ա որոշմամբ: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսվում է Երևանում՝ Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում:<br>Ծրագրի բնագավառը՝ հանրակրթություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 100,050,000 դրամ, որը ներառում է շինմոնտաժային աշխատանքներ, սարքավորումների, տեխնիկայի ծախսերը և ծրագրի կազմակերպման ընդհանուր ծախսեր՝ այդ թվում աշխատավարձ և վարչական ծախսեր : |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողը ք. Երևան Թբիլիսյան խճ. 11/11 հասցեում տեղակայված **«Այբ կրթական հանգույց» հիմնադրամն** է: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 2014թ. սեպտեմբերի 15, ավարտը՝ 2015թ. մարտի 31, տևողությունը՝ 6.5 ամիս: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և | Ծրագիրը նախատեսում է «Այբ» ավագ դպրոցին կից «ՖաբԼաբ»-ի շինմոնտաժային |

<table>
<tr><td></td><td>ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>աշխատանքներ, կահավորում, սարքավորումներով և տեխնիկայով հագեցում:<br>Աշխատանքները կավարտվեն 2015թ. մարտին:<br>Նկարագրված աշխատանքներն իրականացնելու են համապատասխան ոլորտներում մասնագիտացած կազմակերպությունները, ինչպես նաև «Այբ» կրթական հիմնադրամը:<br>Միջոցառումների ծախսերը կկազմեն 95,550,000 դրամ, որից Շինմոնտաժային աշխատանքներ, կահավորում – 28,100,000 դրամ, Տեխնիկա/սարքավորումներ – 67,450,000 դրամ:</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հետևյալ ապրանքների և ծառայությունների ձեռքբերում.
<table>
<tr><td></td><td>'000 AMD</td></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>95,550</td></tr>
<tr><td>ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ,ԿԱՀԱՎՈՐՈՒՄ</td><td>28,100</td></tr>
<tr><td>Նախագծում, վերահսկողություն</td><td>3,600</td></tr>
<tr><td>Շինմոնտաժային աշխատանքներ</td><td>20,500</td></tr>
<tr><td>Կահավորում</td><td>4,000</td></tr>
<tr><td>ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱ</td><td>67,450</td></tr>
<tr><td>Այդ թվում՝</td><td></td></tr>
<tr><td>ՀՀ-ից</td><td>6,000</td></tr>
<tr><td>Ներմուծում</td><td>61,450</td></tr>
</table></td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպման ընդհանուր ծախսերը կազմում են՝ 4,500,000 դրամ, որից.<br>Ծրագրային աշխատավարձ –3,700,000 դրամ<br>Ծրագրային վարչական ծախսեր – 800,000 դրամ
<table>
<tr><td>Հաստիք</td><td>Ամսական աշխատավարձի ֆոնդ՝ ներառյալ հարկերը<br>'000 AMD</td><td>Ամբողջ ծրագրի րականացման ընթացքում աշխատավարձի ֆոնդ՝ ներառյալ հարկերը<br>'000 AMD</td></tr>
<tr><td>ԸՆԴԱՄԵՆԸ (Հազար ՀՀ դրամ)</td><td>569,2</td><td>3,700</td></tr>
<tr><td>Ծրագրի ղեկավար</td><td>423,2</td><td>2,750</td></tr>
<tr><td>Օգնական</td><td>146</td><td>950</td></tr>
</table></td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսված է համագործակցել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:</td></tr>
<tr><td></td><td>կազմակերպությունների հետ</td><td></td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>ա) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:<br>բ) «Այբ»-ը կրթական հիմնադրամ է՝ ոչ առևտրային կազմակերպություն,և իր գործունեությամբ հաշվետու է Հոգաբարձուների խորհրդին ու վերահսկվում է նրա կողմից: «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.<br>1. Տեր Մեսրոպ քհն Արամյան, նախագահ (Հայաստան)<br>2. Լևոն Ղազարյան (ԱՄՆ)<br>3. Դավիթ Յան(ԱՄՆ, Ռուսաստան)<br>4. Կարեն Մուսաելյան (ԱՄՆ)<br>5. Արտաշես Շիրիկյան (Հայաստան, Ռուսաստան)<br>6. Աշոտ Թումասյան (Ռուսաստան):<br>Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կտրվի ծրագրի կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:</td></tr>
</table>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1006-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14841-14 և սեպտեմբերի 17-ի N 06/5-1/14617-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պղնձյա թիթեղներ (22 տեղ, 22,885 կգ ընդհանուր քաշով, 285,585 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 5222 ԱՄՆ-ի դոլար (2,139,550 դրամ), «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արաբկիրի նորակառույց եկեղեցու և Էօրնեկյան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1007-Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14838-14 և սեպտեմբերի 17-ի N 06/5-1/-14618-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված նրբատախտակի (16 տեղ, 19,800 կգ ընդհանուր քաշով, 57,090 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,118.900 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Էօրնեկյան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1008-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 19-ի N 07/80-2/14836-14 և սեպտեմբերի 17-ի N 06/5-1/14619-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ձինաստանից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ լուսավորող սարքեր (55 տեղ, 1449 կգ ընդհանուր քաշով, 18,504.03 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Ամանորյա տոնակատարությունների հետ կապված՝ Մայր Աթոռի շրջակայքը զարդարելու համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1009 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/15732-14 և սեպտեմբերի 24-ի N 06/5-1/15307-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆինլանդիայից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պղնձյա ժապավեն (4 տեղ, 15,070 կգ ընդհանուր քաշով, 92,787.5 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,180.000 դրամ, ՄԾՓ Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1010 -Ա**
**քաղ. Երևան**

## «ԳՅՈՒՄՐՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N 07/80-2/15730-14 և սեպտեմբերի 25-ի N 06/5-1/15463-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱՄ/22.2/9893-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ անհատ բարերար Ռոզա Գասպարյանի կողմից աջակցության նպատակով «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (անվասայլակներ, դեղորայք և բժշկական սարքավորումներ, պարագաներ ու նյութեր, 2 տեղ, 370 կգ ընդհանուր քաշով, 700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Շիրակի» Տ/Մ) ներմուծման ծրագիրը:

2. «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**3 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1011 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-722-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 1-ի N 07/80-2/16082-14 և N 06/3-3/16089-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության 2014 թվականի սեպտեմբերի 27-ի N 02.01/2404 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «ԵՊԲՀ-ում գործնական հմտությունների սիմուլյացիոն ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-722-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՎՀՀ՝ 01503448) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01210095) 2014 թվականի օգոստոսի 27-ին կնքված՝ N ICB 1/2014-CIF/YSMU պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ԵՊԲՀ-ում գործնական հմտությունների ուսուցման կատարելագործման փորձարարական կենտրոնի հիմնադրման համար նախատեսված օգնության և տեղեկատվական համակարգի սարքավորումների մատակարարման, տեղադրման, գործառնական ընդունման աշխատանքների իրականացում՝ 178,637,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական
համալսարան ՊՈԱԿ-ի ռեկտորի կողմից
«1» հոկտեմբերի, 2014թ.
Մ.Զ. Նարիմանյան

«ԵՊԲՀ-ՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ» (ԳՀՍՈՒԿ)

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է խթանել ԵՊԲՀ-ի կրթական բարեփոխումները, նպաստել կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում ուսանողների գործնական հմտությունների ուսուցանման նպատակով ԵՊԲՀ-ում ստեղծվում է սիմուլյացիոն ուսումնական կենտրոն: Գործնական հմտությունների դասավանդման արդյունավետության և որակի բարձրացման նորաստեղծ կենտոնը համալրվում է համապատասխան ուսումնական սարքավորումներով և հավաքածուներով՝ սիմուլյատորներով, ֆանտոմներով եւ վարժասարքերով, ինտերակտիվ էլեկտրոնային ձեռնարկներով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների գծով արտոնություններից: |



| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | Նորարարությունների մրցակցային հիմնադրամ<br>Ս. Վրացյան 73, Երևան 0070, Հեռ՝ +374 (10) 57 56 90, էլ. փոստ cfep@arminco.com |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական» ՊՈԱԿ (ԵՊԲՀ)<br>ՀՎՀՀ 01503448 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երեւան, Կորյուն 2, կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 213 671 716 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԵՊԲՀ-ի ուսանողներ, կլինիկական օրդինատորներ եւ դասախոսներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. հուլիսի 1-ից - 2015թ. մարտի 31-ը: |
